

ՆՇԱՆ ԱԲԱՍՂԱՆ

Ծ Ր Ա Ն Ե Ն Ի

արձակ և չափածո բանաստեղծություններ

Երևան
Հեղինակային հրատարակություն
2010

ՀՏԴ 891.981-1 Աբասյան
ԳՄԴ 842-5
Ա 126

Աբասյան Նշան
Ա 126 Ծիրանենի: Արձակ և չափածո բանաստեղծ./
Նշան Աբասյան. - Եր.: Հեղինակային
հրատարակություն, 2010. - 72 էջ:

ISBN 978-9939-53-783-2

ՀՏԴ 891.981-1 Աբասյան
ԳՄԴ 842-5

© Աբասյան Ն., 2010 թ.

Ծիզ

* * *

Աշխարհում ոչինչ
չի փոխվել,
եղբայր,
ամեն ինչ
նույնն է:

Ոչ մի երկաթե
երգ էլ չի հնչում:

14 փետրվարի, 2010 թ.

Ասուհ ես քեզ

Այսօր դու զգվելի ես ավելի, քան երբևէ:
Դու տոգեպ ես ու մեծաբերան:
Դու տկլոր ես ու ողորմելի:
Դու ատում ես խոնարհությունն
ու լիզում քո վասալի ոտքերը:
Քեզ խաբել են, հիմար:
Քո ամանում աղբ է:
Դու ազնվարյուն չես:
Դու ծաղրում ես քո Աստուծոն:
Դու նախանձում ես քեզ փրկողին:
Դու վաճառում ես կնոջդ, վախկո՛ւր:

Մի՛ ասա՝ քրիստոնյա եմ. դու ծիծաղելի՛ ես:
Մի՛ հպարտացիր քո Կոմիտասով.
դու միայն նրա անունը գիտես:
Մի՛ մաքնանշիր Թումանյանիդ.
դու ուրապել ես նրան:
Մի՛ խոսիր քո «փառավոր» անցյալից.
դու այն չես ունեցել:

Լռի՛ր, սպորո՛ւկ, լռի՛ր:

16 հունիսի, 2010 թ.

ԽՆԵՆԹ Է

Երգում է ու լալիս, լռում ու հայիոյում, հարբում է,
կրակում...

- ԽՆԵՆԹ Է...

Մի գիշեր «երեքգույն ծիածանի», «ակաթե աչքերի» եր-
գիչը խելքը թռչրեց. ուզեց սպանել «անծանոթ» օրիոր-
դին...

- Ա՛յ քեզ անբարո. կինդ՝ մահամերձ, դու՝ այդքան
լպիրշ...

Արդեն կնոջ թաղմանը լալիս է զարհուրելի բարձր.
ձայնը պողոպայի մի ծայրից մյուսն է հասնում...

- Ա՛յ քեզ խելագար...

Ոմն մուղղուսի նրան ճզմել է ժամանակի մեջ ու ապ-
փակում է, ու ապփակում է, ու ապփակում է.

- Տեռորի՛սփ:

- Նայիոնալի՛սփ:

- Սոցիալիստական երկրների եղբայրության ջլափի՛ջ:

*«...Մտորումներս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,-
Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում...»:*

ԽՆԵՆԹԵՐը հեռանում են խռոված ու անաղմուկ...

13 հունիսի, 2010 թ.

* * *

Անփառ:
Գիշեր: Ցուրփ: Անձրև:
Կա՛թ, կա՛թ, կա՛թ, կա՛թ...

Կածան: Ցեխ:
Քայլք: Երկյուղ:
Կածանի վերջը. մենավոր տնակ:
Թիթեղյա տանիք ու... կա՛թ, կա՛թ, կա՛թ, կա՛թ...
Ճռճռացող դուռ:
Ջարդված ապակով քառաչք պատուհան՝ գոգին դա-
տարկ կուժ՝ շրթունքն անձրևոփ:
Դռան արանքից մերթ-մերթ նշմարվող լուռ ուրվական-
ներ՝ թախսի, աթոռի, սեղանի (երևի խոնավ)...
Անփառի խո՛րը, մո՛լթ տիրույթներից խելահեղ քամու
հսկա թներով տնակին հասնող ինչ-որ մափղաշ ճիչ...

Անփառ:
Գիշեր: Ցուրփ: Անձրև:
Կա՛թ, կա՛թ, կա՛թ, կա՛թ...

25 նոյեմբերի, 2007 թ.

* * *

Քաղաքում մեռել է պոետների ոգին,
քաղաքը պոետներ չունի...
Ուրաչման ճահիճը՝ օրերի շրթունքին.
Էլ երգը ո՞ր այգին սնի...

28 հուլիսի, 2009 թ.

* * *

Հուդան սոսկալի խուճապի մեջ է.
տենդագին դողով կոկորդն է խցկում
ու կուլ է տալիս, ինչ իրեն նետեն,
հետո հագուստի արնոտ թևքերով
սրբում է բերանն ու աղաղակում.
«Էլի՛ եմ ուզում»...

Հուդան սոսկալի խուճապի մեջ է.
նա ոչ էլ գիտի՝ ինչու է սոված...

25 հոկտեմբերի, 2007 թ.

* * *

Մապենադարանում հեքիաթ էր փռված, արևո՛րդ-արևույ
մի հեքիաթ...

Իսկ փողոցում Մաշտոցը թքեց երեսիս...

12 հոկտեմբերի, 2009 թ.

* * *

Տարաք, փարաք, ողջը փարաք Հին սրփիս,
Հին երկնքի Հին կրակի Հին սրփիս,
դափարկեցիք երակները արևի.
ո՛չ հուր մնաց, ո՛չ հրի փենչ հին սրփիս:

11 փետրվարի, 2010 թ.

* * *

Այս ինքնադավ երկրում,
փխեղծների երկրում
գարուն կգա՞...

Էլ մեզ ուրիշ սիրով
ուրիշ լույսով փիրող
արև կփա՞...

8 հունվարի, 2010 թ.

Էքստրոնս

Ախ, ո՛նց եմ հիմա ձեզ կարոպում.
դուք՝ Այնպեղ, ես՝ մենակ այս ճամփին...
Եվ ո՞վ է ինձ այսպեղ ճանաչում.
դուք՝ Այնպեղ, միայն ես կեսճամփին...

28 մարտի, 2009 թ.

* * *

Գույները՝ խոնարհ...

Բառերը հաճախ
ձերմակ են, Եվա՛...

28 մայիսի, 2010 թ.

* * *

Անձրևն ինձ ճանկում
ու վարդաջրով
կուրծքս վառելով՝
կաթում է ցեխին...

Ցեխոյ քաղաքում
ճիչը խեղդուկ է...

12 ապրիլի, 2010 թ.

* * *

Ես փեղ չուներմ այս աներագ ու անհեքիաթ աշխարհում.
Իմ միամիտ սրտի կանչը ո՛չ մի կախարդ չի լսում...

Սեծ դավերի, աղմուկների, իրարանցման մշուշում
հավաքամքս՝ ծիծաղելի, բազուկս՝ թույլ, անարյուն:

Իմ անուրջը՝ իմ սենյակում, իմ մեղեդին՝ կրծքիս փակ.
բաց չեմ թողնի՝ դուրս չթռչեն, դրսում դուք ինձ չխղճաք:

Դուք էլ չասեք՝ ինձ փեղ չկա, հեքիաթ չկա աշխարհում,
ու միամիտ սրտիս կանչը ո՛չ մի կախարդ չի լսում...

2 ապրիլի, 2008 թ.

Maria

Շուրջը՝ կարող,
շուրջը՝ կսկիծ.
ո՛չ առվակ, ո՛չ գուռ:

Անդորրը՝ ճի՛չ,
երգը՝ կաղկանձ,
թրթիռը՝ մրմուռ:

Մանուշակը՝
մոխիր, փրոր.
ոչինչ չի լսում:

Էլ այս այգում
ոչ մի հանդարտ
երազ չի ծաղկում...

30 մայիսի, 2009 թ.

* * *

Ի՞նչ լռությամբ,
ի՞նչ լռությամբ
աղմկախեղդ
կրճբիդ փարվեմ,
որ հասկանաս...

17 օգոստոսի,
2009 թ.

Կհւո

Մուրն ինքնագոհ ներս էր ծխում պափուհանիս...
Թիկունքիս գրկեց ու փաք շոյում էր նկարչի պարանոցը...
Հեփո աչքերը շեշտակի զարկեց կրավին, և պայթեց
գիշերը...

Նկարչիս թե նկարիս պոկված լույսը դողալով դուրս էր
ծխում պափուհանիս...

11 հուլիսի, 2009 թ.

ԵՐԵՔ ԿԱՍԿԱԾ

Աստված մեզ չի երևում, որպեսզի իրեն փնտրենք
մարդկանց հոգիներում:

Մեր ճամփան փշոփ է գեղեցիկ:

Լինել ազատ նշանակում է լռել քաղցրությամբ:

* * *

Կարողը՝ սեզ,
Կարողը՝ զուսպ,
Կարողը՝ խորին,
Կարողը՝ փակ,
Կարողը՝ լուռ
թիկնած անդորրին:

Եվ ո՞վ գիտի,
և ո՞վ գիտի,
թե որքան խոկուն
աշուններ կան
փակ կարողով
կարոպե սրվում...

14 նոյեմբերի, 2009 թ.

* * *

Ողջն ու եղածը
ասելու համար
պոեմ չծնվեց.
ողջը այսքանն է.
ես երգերգույներ
ձոնել չգիտեմ...

23 հունվարի,
2010 թ.

Ե. Չ.

Երբ կարմիր խոսքը
ողջակիզվում է
քո կապույտ սրտում,
բայց լսող չկա,
դու հանձար ես, խն:

13 մարտի, 2010 թ.

* * *

Թողե՛ք ինձ:
Հույսերից իմ բոլոր
ես այսօր ուզում եմ դատարկվել,
ես կանգնել տենչերից հին ու նոր
և ոչ մի պայքարով չվառվել...

9 օգոստոսի, 2009 թ.

ԽԵՂԱՏԱԿՆԵՐ

Ես խեղկապակ էի, և ծիծաղը պողթկում էր ամեն ինքնանստնապումից հետո: Բոլորը հրձկանքի մեջ էին: Մարդիկ հիմար էին գտել, և դա այնքա՛ն մխիթարող էր...

Ես ծաղրում էի ինձ...

Ես խեղկապակ էի...

7 հոկտեմբերի, 2009 թ.

ԵՐԵՎԱՆ

Տխուր, միայնակ, հիվանդ մի տղա
աշխատավայրի թալանից փրկել
ուլ ցեխերի մեջ ընկնել-ելնելով,
ծնկները, դեմքը, կուրծքը քերծելով՝
տուն էր հասցրել
մի բուռ խեղճ հավապ...
...Եվ ահա փոքրիկ սենյակում ծնկած՝
իր փախստածը (իր ունեցածը)
կաթ-կաթ ցողում էր Տիրոջ այգու մեջ...

...Փոքրիկ սենյակը կամա՛յ լցվում էր Այնպեղի Բույրով...
Ու հիվանդ տղան Բույրի թներով պոկվում քաղաքից,
Նարեկը ձեռքին՝ թռչում էր դեպի գիրկը Մարիամի...

19 հունվարի, 2008 թ.

Աստիճ, Աստիճ

Արև աղջիկ, արև աղջիկ,
արևների բո՛ւյլ աղջիկ,
այս ոհմակից հեռու՛ ճախրիր,
շուշան՝ աղջիկ, թո՛ւյլ աղջիկ:

Լուսե՛ աղջիկ, անբի՛ծ աղջիկ՝
ոսկեճաճանչ, ոսկեծիր,
հեքիաթներից ինչո՞ւ իջար.
գնա՛, գնա՛, ե՛ր դարձիր:

6 օգոստոսի, 2009 թ.

Վերջ

Իմ սիրելին աշխարհ կգա,
երբ ես վաղո՛ւյ մեռած լինեմ:

Նա կվառվի լուսնե կնոջ
ազնվական կարոտներով:
Հեռո՛ւ հեռվի աշուններից
իրեն հասած բեկորներս
ափը կառնի, շուրթին կտա
ու մյուս ափով գեպնին թիկնած՝
դալար մարմնի հզոր դողով
կհեկեկա՛, կհեկեկա...

...Ես չեմ լսի...

26 մայիսի, 2008 թ.

* * *

Ես խեղճ ճնճղուկ եմ՝ արծվի երագով...
Ես մինչև հիմա միամտաբար
ու խիստ ավելորդ ոգևորությամբ
ամենքի առջև ինձ հռչակել եմ
մե՛ծ բույն ունեցող,
մինչ իրականում իմ ունեցածը
նեղլիկ վանդակ էր
ուրիշի տան մեջ...

Ներե՞ք ինձ, մարդիկ...
Ես ձեզ սպել եմ, թե ճախրել գիտեմ...

7 նոյեմբերի, 2007 թ.

* * *

Անտառը հոգնեց:

Ու կանաչ հեքով գրկեց երեկոն:

Ուզեց՝ ձորի մեջ հանգչի հե՛զ գիշեր,
սարերին իջնի խո՛րը լռություն...

Արևն ամաչեց:

Թողեց՝ լուսինը ցողա ծառերին,

և կույս անդորրը մնա ինքն իր հետ...

Անտառն անրջեց՝

որսորդից հեռո՛ւ, մենակ, խաղաղված:

3 հոկտեմբերի, 2008 թ.

Վերջ

ՀԵՔՐԱԹ

ԾԱՂԻԿԸ

Սարալանջի կանաչ հասակով նիհարիկ կարմիր ծաղիկը նորից հիշեց, որ ինքը ծաղիկ է, և խոնարհ բերկրանքը նորից կարկաչեց ավիշներում: Ճկվեց դեպի վեր՝ դեպի կապույտը, ու թերթիկները շորորացին ամաչկոտ:

Սարալանջի կանաչ հասակով նիհարիկ կարմիր ծաղիկը ամեն անգամվա պես քամու ականջին ամաչկոտ փսփսաց՝ գիտե՞ս, ես ծաղիկ եմ, և քամին ամեն անգամվա պես իր հեղուկ զարմացած մի հայացք նետեց ու շարունակեց ցուրտ թռիչքը դեպի քաղաք...

18 հուլիսի, 2008 թ.

ԶՐՈՒՅԾ

Սոնա Մարտիրոսյանին

- Տխրի՛ր ինձ հեպ այ հեքիաթ,
օրերի թերթ-դադարին,
բացվի՛ր ճերմակ վայրկյանի
հանգրվանի թելերին...

- Ների՛ր ինձ պես, ո՛վ գիշեր,
աղմուկների ուրուի՛ն.
մենք հո գիպե՞նք՝ ինչ ունենք
մեր սրտերի թներին...

24 հունվարի, 2010 թ.

* * *

Անճրևի հոտ, կեղևի հոտ փողոցում,
Ժպիտի հոտ, թրթիռի հոտ փողոցում,
Հայապքի հոտ, կարոտի հոտ, հարցի հոտ,
Ինչ-որ հեռո՛ւ, խո՛ւլ կանչի հոտ փողոցում...

8 ապրիլի, 2010 թ.

* * *

Իմ կանաչը այս առավոտ անձրևի հետ կգնա,
երազները բաց կթողնի, հևքը կառնի, կգնա...
Հին օրերի պատշգամբում մի գարուն էլ մոռանա՝
Եր չի նայի, սիրտը թեթև՝ ազանիտ-ազատ կգնա...

22 հոկտեմբերի, 2009 թ.

Երիցե Չարեսօն

Արև եմ ուզում ու դեղին,
ուզում եմ ամռան լուռ կեսօր,
փռվեմ փաք ժայռի կապարին,
ու կուրծքս երգի մեղրածոր:

Ուզում եմ լուսի պարզ նկար՝
բարի ու վառվող ու մաքուր,
ուզում եմ հիշել, ինչ որ կար
քո փաղի սրբում ոսկեհուր...

10 նոյեմբերի, 2008 թ.

* * *

Հեռո՛ւ հեքիաթ, կանաչ քամիդ
թեթև անցավ իմ ճամփով,
խառնամբոխում կրծքիս դիպավ,
շոյեց, անցավ իմ ճամփով...
Երբ տուն հասավ, տեսնես պապմե՞ց՝
ինչ կարոտ է քեզ փնտրում,
ով է մոլոր երգի թևով
զնո՛ւմ-զալիս հին ճամփով...

28 հունիսի, 2009 թ.

* * *

Նա այսօր հոգնել էր քաղաքից,
նա այսօր իր սիրտն էր սիրում,
նա այսօր հեռացել ձեզանից,
կապույտում լռո՛ւմ էր, լռում...

17 հուլիսի, 2009 թ.

* * *

Դեղձուկի խորքում
կարմիր մապուռ կա,
հին կարոպի պես,
արևի պես լուռ
մի կարմիր մապուռ...

Դեղձուկի խորքում
խոսքը խոնարհ է.
պոեմներ չկան...

Ծովինարին
3 օգոստոսի, 2010 թ.

* * *

Երկինքը լուսնալույսով օժեց աղջկա թևերը, և աղջիկը
թո՛ւյլ ժպտաց Նրան...

Դա մի մաքուր հոգնություն էր խոնարհվող օրվա ու-
սերին և մի մե՛ծ գորով Տիեզերքում...

Անահիտ Ղազարյանին
20 ապրիլի, 2010 թ.

Էլեգիա

Տաթևիկ Ասատրյանին

Երբ աշուն գա, քույրս՝ փխուր ու վեհ,
լուռ կնայի իր անժխոր այգուն,
ինչպես ամպածրար դեղին սրբի,
միալար անձրևի խշրփոցում:

Կշնկշնկա ջրափոսը փոքրիկ՝
տժգույն շուրթին առած երեք տերև,
կարոտը ծամերից վար կծորա,
գորովը կեւնի վերն՝վերն...

18 մայիսի, 2010 թ.

* * *

Ցուցամատուցող ափիս մեջ արև էիր նկարում: Երկա՛ր-երկար
նկարում էիր մի փոքրիկ արև...
Ճերմակ ավազին ոսկե նավեր են լողում...

6 փետրվարի, 2010 թ.

* * *

Իմ փափունկ գիշեր,
նրա կոպերին դյուրանքներ ցողիր.
Թող անհոգ ննջի,
ձյունե ճակատը օժիր գգվանքով,
վարսերը շոյիր.
Թող ցուրտ օրերից ոչինչ չհիշի.
ողջը մոռանա,
թող անհոգ ննջի...

3 սեպտեմբերի, 2009 թ.

Նսւը

Անահիտ Գրիգորյանին

Արփին ծնկեց բլրի լանջին,
ճյան կուրծքը պապռեց
և իր շողով փոքրիկ ճեղքում
գարուն նկարեց:
Ձյունը նայեց սրտի ծաղկին,
շփոթվեց, հուզվեց,
մի երկնաբույր առվակ դարձավ,
քաղցր արտասվեց...

9 փետրվարի, 2009 թ.

ԶԱՐՈՒՀՈՒՄ

Հովը ծեգին կուրծքը թակեց.
Երազները բացվեցին...
Էլի զարթնեց մաքո՛ւր-մաքուր՝
անաշխարհիկ՝ լուսածին...

29 սեպտեմբերի, 2009 թ.

ԷԼԵԳԻԱ

Մի թավշյա, մի թավշյա իրիկուն
ճոճվում է, ճոճվում է փողոցում,
ու լուսնոսր ու տխուր շոյանք է,
արծաթ է, արծաթ է բակերում...

Օրերն էլ, օրերն էլ օրոր են,
խոհերն էլ, երազն էլ իմ ամեն.
իրիկվա մուգ կապույտ ծորի հեք
Կլռեն, կլռեն, կլռեն...

19 հուլիսի, 2009 թ.

* * *

Իմ սենյակում էլի ծաղկեց
հին տխրությունը,
Հին արցունքով դեմքս շոյեց
մեռնող աշունը:
Աշնան շնչում իմ կարողը
կապույտ ծղրտաց,
Իմ գիշերը սիրտը լցրեց,
թաքուն հեկեկաց...

24 դեկտեմբերի, 2008 թ.

* * *

Դահլիճն արդեն դատարկ-դատարկ էր, և պատերը
հևում էին թրջվող փողոցի խշշյունից...

Վաստակած դաշնամուրը հիմա այնքան քաղցրու-
թյամբ էր լռում...

Կիսամուրթ սարսռաց...

...Դուռը խաղաղ բացվեց, և անդորրը ժպտաց. նա էր:
Թիկնեց անկյունում ու սկսեց լսել... իր թաքուն երգ...

Կոմիտասի Վարդապետին
4 մայիսի, 2009 թ.

* * *

Կուրծքը լիքն էր լռությանը: Ոչ կանաչ, ոչ կարմիր.
գորշ էր երագում...

Սակայն գիշերվա հետ անձրևը հուշի՛կ ետ էր քաշում
փեշերը...

Մերկայրեց պարուհանը, սիրտը զգո՛ւյշ իջեցրեց գո-
գին. «Թող շնչի հեռացող անձրևի բույրը»...

24 ապրիլի, 2009 թ.

Վերջ

ՏԵՆԵՐ

* * *

Բանաստեղծություն ձնծաղիկի,
գարնան
և հորս մասին,
որ, դեռ ձնծաղիկը չծաղկած,
դեռ գարունը չեկած,
գիշերվա ժամին
ցրտահար մատներով
մոմ է վառում
իր կիսածածկ բանջարանոցի
ամեն մի առվի եզրին,
որ նորապուճակ բույսը չմրսի
հանկարծ...

Բանաստեղծություն Օբամայի,
Մեդվեդևի
և հորս մասին,
որ համաշխարհային կարևորագույն
հարցերով չի զբաղվում,
այլ գիշերվա ժամին
ցրտահար մատներով
մոմ է վառում
իր կիսածածկ բանջարանոցի
ամեն մի առվի եզրին,
որ նորապուճակ բույսը չմրսի
հանկարծ...

Բանաստեղծություն բանաստեղծի,
ընթերցողի
և հորս մասին,
որ ո՛չ բանաստեղծություն է գրում,
ո՛չ ընթերցում է,
որովհետև գիշերվա ժամին
ցրտահար մատներով
մոմ է վառում
իր կիսածածկ բանջարանոցի
ամեն մի առվի եզրին,
որ նորատունկ բույսը չմրսի
հանկարծ...

Բանաստեղծություն հորս մասին,
նրա ուսերին ձնծաղիկ է ծաղկում,
գարուն է գալիս...

7 մարտի, 2010 թ.

* * *

Պահպանողականները հոխորտում են, ազատականները՝ հռհռում, լրբերը փրորում են իրար, ռոմանտիկները հարբում են, պոստմոդեռնիստները՝ փիլիսոփայում մեծ-մեծ, այրերը թմբկահարում են իրենց բարի գործերը, ողորմությամբ հագեցածները փառաբանում են նրանց...

Իսկ այդ նույն պահին
հեռու Կյորենսի
մաքուր պուրակով
հանդարտ անցնում է
մի խոհուն աղջիկ:

12 մարտի, 2010 թ.

ՏԵՌԵՐ

Կեսօրվա բոլոր ծախքերում արև է:

Շողերը թիկնել են փան պատերին, բազմել քարերի վրա, փռվել բակի կանաչում:

Ծիրանենին հարազատ-անտարբեր հայացքով պատրճգամբին է նայում:

Քույրս օրորվում է ճոճանակին:

Ինչ-որ փեղ պատի խոռոչում բզեզի բույն կա:

Հայրս քնած է թախտին:

Ամենուր բույր է:

25 մայիսի, 2010 թ.

ԷԼԵԳԻԱ

Մանչուկս գլղոր-մլղոր ինձ է վազում, փարվում է ուր-
քիս...

Պապուհանին կաթիլներ են, ռադիոյով՝ «Կռունկը»...

Այս ի՛նչ աշուն է...

Մանչուկս քրքջում է, քրքջում...

Քրոջս որդուն
13 փետրվարի, 2010 թ.

* * *

Քեզ չեն հասկանում քեզ չեն հասկանում քեզ չեն հասկանում չեն հասկանում այսպեղ քեզ չեն հասկանում քեզ այնպեղ չեն հասկանում սա քեզ չի հասկանում չի հասկանում դա նա այդպեղ քեզ չի հասկանում, **ապե՛ր:**

...Ամեն անգամ, երբ նրանք խլացնում են իրենց ականջները, ես փազնապից շփոթում եմ հովիտն ու քաղաքը, և իմ ցավի ծանրությունից միշտ քո՛ թերթիկներն են խոնարհվում, իմ խելո՛ք ձնծաղիկ...

Սորս
20 մարտի, 2010 թ.

ԵՐԿՈՒ ՀԱՐՅ

Ինչո՞ւ է դարը աղմկում:
Ինչո՞ւ է ծառը թախծույ, երբ պապս քնած է նրա սպվե-
րում...

26 հուլիսի, 2010 թ.

ՎՏԱՐՈՒՄ

Ադամն ու Եվան նայեցին իրար, նայեցին, շոջվեցին ու հեռանում էին համր...

- Սպասե՛ք, – նորից կանչեց Նա:

Երկու արտասովոր տերև ձեռքին՝ մոտեցավ, նայեց...

Հեղո զգեստավորում էր Ադամին, և Ադամը գեղեցիկ էր...

Հեղո ծածկում էր Եվայի մերկությունը, և Եվան նման էր լուսաբացին...

Հեղո ասաց.

- Պատրնեշից քիչ այն կողմ ուրիշ այգի կա. այնտեղ կհաստատվեք. ավելի հեռու չգնա՛ք:

17 հուլիսի, 2010 թ.

* * *

Նռնենին վառվո՛ւմ է, վառվում,
մրմուռով ճանկում է սիրտն իր,
և այգում կարոտ է փռվում՝
հեռավո՛ր, հրավո՛ր, կարմիր:

Նռնենին կռվո՛ւմ է, կռվում՝
հուշի հեպ, հրի հեպ այն հին,
բայց նորից նրան է փարվում,
չի տրվում նոր դարի նիրհին:

7 մարտի, 2009 թ.

ՇԱՀԱՆԵ

Կարմիր թիթեռնիկն անհոգ ու անվախ թռչում էր եկեղեցու շուրջը...

Դարերի լուռ հովանու փակ վայրկյանը խաղաղ էր ու կենդանի...

21 սեպտեմբերի, 2009 թ.

* * *

Գրքերիս մայրաբույր օրոցքում
ես մաքուր, ես մաքուր եմ այնպես
և հեռու այս ճղճիմ աղմուկից
և բարձր և խաղաղ և անպես...

Ո՛չ փաղպուկ անհապնում ու անլույս,
ո՛չ քծնանք, ո՛չ խռովք, ո՛չ դավեր.
Գրքերիս մայրաբույր եզերքում
միշտ արև, միշտ արև, միշտ արև...

3 նոյեմբերի, 2009 թ.

Չքսաղ երգ

Գիշերվա աղոթքից հետո միայնության մեջ ես այնքան
գեղեցիկ եմ, ասես լուռ շարական...

Գիշերվա աղոթքից հետո միայնության մեջ աշխարհը
ծիծաղելի է ինձ, և սիրտս ոչ ոքի չի կարոպում...

20 դեկտեմբերի, 2009 թ.

* * *

Արևի հասուն շողերը մի քիչ այն կողմ հրեցին փոքրիկ ամպը, ճեղքեցին ծառերի սաղարթները, լցվեցին գետրը, և ջրերը փարան նրանց հանդարտ ու խելացի կարկաչով...

Դա այնքան հասկանալի էր...

Ընկերոջս՝ Գեղամին
26 հունիսի, 2010 թ.

* * *

Ուռենին հանգի՛ստ-հանգիստ է,
ուռենին չի լարվում:

Արևը մաքուր է ու մեծ:

«Ո՛ր է, մա՛հ, քո հաղթությունը,
ո՞ր է, գերեզման, քո խայթոցը»:

Մի ուռենի,
մի արև,
մի ոսկեվաճ տապան...

4 հուլիսի, 2010 թ.

ԾԻՐԱՆԵՆԻ

Ես՝ կանաչ ծառ,
Ես՝ հող,
Ես՝ խոր արմավ
հողում,
Ես՝ լռություն,
Ես՝ դող,
Ես՝ մի կանաչ
շրշյուն:

Ես՝ կենդանի,
Ես՝ թայ,
Ես՝ բայ տերև
ճյուղին,
Ես՝ հողաբույր
երազ,
Ես՝ երազի
ուղին:

14 հունիսի,
2008 թ.

ՏԱՏԵՐԳ

*Տեր, Տեր մեր, զի՛ սքանչելի
է անուն քո յամենայն երկրի:
Սաղմոս Ը, 10*

Սրտիս խայտա Քո Կաթնաղբյուր լույսի առուն՝
սիրտս ծաղկի, սիրտս բուրա:
Հոգիս վառվի վառ, գղջահույզ արևներում,
հոգիս դառնա հույսի քուրա:

Կուրծքս փռեմ Քո կանաչգույն Կանչերի մեջ՝
կուրծքս ճախրի, կուրծքս ցնծա:
Շուրջս լռեն ն՝ հոխորփանք, ն՝ կիրք, ն՝ վեճ.
շուրջս միայն Քո խոստումի խոսքը թնդա:

6 հուլիսի, 2008 թ.

ՍԵՆՅԱԿԻ

Սենյակդ արև է:
Որովհետևն թաքցնում է քեզ:

Սենյակդ քո՛նն է,
քո անդորրը,
քո կարոփը,
քո գաղտնիքը,
քո դեմքը,
դու:
Միայն դու:

Սենյակդ քեզ չի շողոքորթում:
Սենյակդ քեզ չի դափում:
Սենյակդ չի աղմկում:
Սենյակդ չի լքում:

Սենյակդ դեղին գիրք է քո ձեռքերին:

* * *

Վերադարձա:
Նա մաքրում է սիրտս աղմուկի կեղտից,
լուսավորո՛ւմ-լուսավորում:

18 հունիսի, 2010 թ.

* * *

Բույր-Պարարագի
արևոյ խորքում
շարականաթև
Տերը գրկել է
երկու հեգ գլուխ...

Երեք հեգ գլուխ՝
արևի խորքում...

6 հունիսի,
2010 թ.

* * *

Գաղափարներն
ունայն են,
պոեզիան՝
ծիծաղելի,
տեսություններ
չկան,
հանձարներ
չկան,

Ճշմարտություն
չկա...

Երբ լողում ես
խորքից
խորք,
գույնից
գույն,
լռությունից
լռություն,
սեր,
միայն սեր,
միմիայն
մի պարզ
սեր
կա:

22 հունիսի,
2010 թ.

ՊՈՇՏԱԵՐԻՆ

Իրիկունս եմ ուզում,
իմ պատշգամբը,
իմ հովը,
իմ թեթև'-թեթև
լռությունը...

Դուք բարձրացեք.
ես չեմ գալիս:

24 հունիսի, 2010 թ.

* * *

Նրա դեմքը՝ հեզ,
Նրա դեմքը՝ վեհ,
Նրա դեմքը՝ Կրկար,
Նրա դեմքը՝ ներող:

Նրա աչքերում՝ ցավ,
Նրա աչքերում՝ լույս,
Նրա աչքերում՝ բույր:

Նրա ճակատին՝ մրմուռ,
Նրա ճակատին՝ կրակ,
Նրա ճակատին՝ արև:

Նրա սիրտը՝ լուռ,
Նրա սիրտը՝ լուռ,
Նրա սիրտը՝ լուռ...

Նա:

12 հունիսի, 2010 թ.

ՎԱՅՐԷՁՔ

Կարմիր ծաղիկներ,
կարմիր-կարմիր-կարմիր ծաղիկներ...
ԼԵՌՆ:
Գեղը...
Կարմիր ծաղիկներ...
ԼԵՌՆ:
Ճանապարհներ-ճանապարհներ-ճանապարհներ:
Վանքը...
Կարմիր-կարմիր...
Քաղաքը...
ԼԵՌՆ:
Քաղաքը...
ԼԵՌՆ:
Քաղաքը...
Թռիչքուղին...

- Ապեր, դու ենկոմ անցի:
- Ապեր, էն կոմ անցի:
- Ապեր, ընդե՛ն՛...

- Խի՞ էկար որ. մնայիր, էլի...

2 հունիսի, 2010 թ.

ՎԵՐՁ

ՃԻՉ

Չի փոխվել	3
Ասում եմ քեզ	4
Խենթ է	5
Անտառ	6
Քաղաքում	7
Հուդան	8
Մաշենադարանում	9
Տարաք, փարաք...	10
Այս ինքնադավ երկրում...	11
Էքսպրոմեր	12
Գուները՝ խոնարհ	13
Անձրևն ինձ ճանկռում...	14
Ես փեղ չունեմ	15
Maria	16
Ի՞նչ լռությամբ...	17
Կինո	18
Երեք կասկած	19
Կարոտը՝ սեզ...	20
Ողջն ու եղածը...	21
Ե. Չ.	22
Թողեք ինձ...	23
Խեղկապականեր	24
Երեկո	25
Անիին, Անիին	26
Վերջ	27
Ես խեղճ ճնճղուկ եմ...	28
Անտառը հոգնեց	29

ՀԵՔԻԱԹ

Ծաղիկը	30
Զրույց	31
Անձրևի հոտ	32
Իմ կանաչը...	33
Եղիշե Չարենցիին	34
Հեռու հեքիաթ	35

Նա այսօր...	36
Դեղձուկի խորքում	37
Երկինքը լուսնալույսով...	38
Էլեգիա	39
Ափիս մեջ արև...	40
Իմ փափուկ գիշեր	41
Նկար	42
Զարուհուն	43
Էլեգիա	44
Իմ սենյակում	45
Դահլիճը	46
Լռությամբ	47

ՏԵՐԵՐ

Հորս	48
Կյորեսում	50
Տերեր	51
Էլեգիա	52
Մորս	53
Երկու հարց	54
Վկարում	55
Նռնենին	56
Շահանե	57
Գրքերիս	58
Չքնաղ երգ	59
Արևի հասուն շողերը	60
Ուռնենին	61
Ծիրանենի	62
Ցնծերգ	63
Սենյակդ	64
Բույր-Պապարազի...	65
Պարզ սեր	66
Պոետներին	67
Նա	68
Վայրեջք	69

Նշան Աբասյան
Ծիրանենի
արձակ և չափածո բանաստեղծություններ

Շապիկը՝
Անահիպ Գրիգորյանի

Վերստուգումը՝
Գայանե Աբասյանի

Տեխնիկական աջակցությունը՝
Արտակ Համբարձումյանի

www.abasyan.wordpress.com

Տպագրվել է «Զանգակ-97» հրատ. տպարանում: